

Ավարտվեց տարեցների հանրապետական մրցաշարի մարզային փուլը, որը տեղի ունեցավ Աբովյանի շախմատի դպրոցում: Այն կազմակերպել էր սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը: Մրցաշարը իրականացվում է 3 փուլով՝ համայնքային, մարզային և հանրապետական: Ներկայացված է 5 մարզաձև՝ շախմատ, նարդի, շաշկի, դարս և բաստկեբոլի գնդակի նետում: Բյուրեղավանում հունիս ամսին կայացել էր համայնքային փուլը, որն ի դեպ անցել է ակտիվ , ինչի արդյունքում մարզային փուլ է անցել 4 մասնակից. Անդրանիկ Խաչատրյան՝ բաստկեբոլի գնդակի նետում, Ժիլբերտ Սիրունյան՝ շախմատ, Լյովա Սարխոշև՝ շաշկի և Վաչագան Հովհաննիսյան ՝ նարդի մարզաձևերից: Մեր մասնակիցներից ոչ ոք հանրապետական մրցաշարի ուղեգիր չնվաճեց: Նշենք միայն, որ մեր մասնակիցները գրավել են 2-րդ և3-րդ պատվավոր տեղերը և արժանացել պատվոգրերի: Տարեցներին մասնակցության համար աջակցել է համայնքապետարանը:

21.08.19